

7630.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ (ԵՊՈՅ)



Զ. ԿՈՐԿՈՑՅԱՆ

ԱՐԱԳԱԾԻ ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

ՊԵՏՂՈՍ — ՅԵՐԵՒԱՆ

1 9 3 4

Հ Ս Խ Հ Պ Բ Ո Ւ Ե Տ - Տ Ո Ւ Բ Ի Ջ Մ Ի Ը Ն Կ Ե ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն (ՕՍՏՅ)

Զ. ԿՈՐԿՈՏՅԱՆ

ԱՐԱԳԱԾԻ ՄԱՐԶԵՐՈՒՏՆԵՐ

7669
6/1/25

БИБЛИОТЕКА
Геологического Ин-та
Арм. Фил. Акад. Наук СССР

1934

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

ԱՐԱԳԱԾԸ ՏՈՒՐԻՍՏԻ ՀԱՄԱՐ

Շատ քիչ են այն լեռները, վորոնք վոչ միայն շատ բարձր են, այլ և ստորոտից մինչև գագաթը ծածկված են կանաչով: Երբ-տեղ այդ համատարած կանաչ տարածության մեջ առանձնակի ցցված են քարակույտեր և կամ փոքրիկ ժայռեր՝ գեղեցկության պանորաման ավելի բազմազան դարձնելու համար:

Այդ քչերից մեկն էլ Արագածն է:

Կանաչ խոտ ու ծաղիկ, մարգեր ու մարգագետիններ, կարկաչյուն առվակներ ու ծլվլացող թռչուններ, բզզացող մեղուներ ու բազմերանգ թիթեռներ, հոտ ու բուրմունք, գույներ ծով ու լեռնային անուրջ:

Ահա Արագածը — «գեղատեսիլ» Արագածը:

Բնությունը ձնծաղիկից, ապրեմ-չապրեմից, կարմիր կակաչից, աման կոտրուկից, մանիշակից, վայրի մեխակից, գենարփուկից, անմեռուկից ու բազմահազար յերփներանգ ծաղիկներից Արագածի վրա կերտել է գորգեր, վորոնց վրա պետք է պառկել, թավալել, վորպեսզի չորս կողմից պարբունեն ծաղիկներն ու ապա, գեփյուռի մեղմ նվազի տակ, խելագար սիրահարի նման, վրա

Թափվեն ու գգվեն իրենց հյուրին, իրենց գըր-
կում հանգստացողին:

Քայլել ծաղիկների միջով, յերփներանդ դա-
լար գորգերի վրայով, անուշահոտ բուրմունքնե-
րով լի շրջապատում, ծծել լեռնային ջինջ ողբ,
շնչել վոչ միայն թթվածինը, այլ և ոգոնացած
թթվածինը:

Քայլել զեփյուռների նվազի տակ, ամպերի
քուլանների միջով, կախվել յերկնքի ու յերկրի միջև:

Քայլել չինկիլ քարերի վրայով, լսել «գըռգըռ»
ձայներ ու շփոթվել, չիմանալ թե դա ինչ նվագ
է, արդո՞ք քամին է ճգնում պահվել չինկիլ քա-
րերի արանքում ու, տեղ չգտնելով, դուրս է սլա-
նում թուռնելից դուրս յեկող շոգեշարժի նման
սուրալով, թե՞ չինկիլների տակից ջրերն են սա-
հանքներով ցած վազում:

Քայլել աղբյուրների մոտով, խմել պաղ ջրեր
ու այդ բոլորի մեջ մոռանալ ուտելը, չե՞ վոր ոգն
ու ջուրը, ծաղկի բուրմունքն ու վայելքը խառ-
նվելով կազմում են քիմիական նոր բաղադրու-
թյուն, վորն ունի իր կալորիան, իր վիտամինը:

Քայլել 50 մետրից բարձր ջրվեժի մոտով, մա-
քուր ծծմբի տարածությունների միջով:

Քայլել ու զիտել պանորամա վտաքի տակ,
պանորամա աչքի առջև վերևում և՛ պանորամա
հետադարձ հայացքի համար՝ ներքևում, ուր դաշ-
տերն ու գյուղերն են փռվել, յեզերելով լեռնա-
շղթաների պարեգոտիով:

Քայլել ու զիտել հարյուրավոր կիլոմետր հեռու
մշուշի մեջ պահվող քաղաքներն ու գյուղերը, գոր-
ծարաններն ու հիդրոկայանները:

Քայլել ու դիտել ներքևում կուզ յիկած և հունի մեջ դալարվող ցամաքած գետերն ու վճակները և դրանց հակադիր՝ խորհրդային լայնանիստ ջրանցքներն ու առուները:

Քայլել ու տեսնել նյութական կուլտուրայի մնացորդներն ու դեպի պատմութեան գիրկը նետվող քոչվորական կենցաղը:

Քայլել քոչվորների վրաքնների միջով, լսել գառների մայունը, յերեխաների կանչը, շների հաշոցը: Ախորժակով ուտել վոչխարի պանիրը, կովի կաքազը ու դոմեշի մածունը: Ուսումնասիրել քոչվորի կյանքը ու նրան հակադիր՝ խորհրդային անասնապահական տնտեսութիւնը:

Քայլել յերանավետ վայրերով, փնտռել, հետախուզել և գանել նորանոր դեղաբույսեր ու ծաղիկներ, հանքեր ու թանգարժեք քարեր:

Քայլել կանաչ գորգերի վրայով՝ ուսումնասիրելու համար յերկրի փուվածքը, լանդշաֆտը, ջրային սիստեմը: Մտքով ընդգրկել յերկրորդ ու հետագա հնգամյակների խնդիրները և փնտռել նրանց լուծումը:

Քայլել բանաստեղծելով և բուրմունքների միջով վորոնել ոգտակարը՝ հաճույքի հետ ընդելուզված:

Ահա այն բոլորը, վոր կարելի յե տեսնել Արագածի վրա և վորը կազմելու յե դեպի Արագած մարշրուտների յելակետը:

Տուրիստ, յեթե փնտռում ես անեղ ժայռեր՝ վեր մազլցելու համար, մի գնա Արագած, այնտեղ այդպիսի ժայռեր չկան:

Տուրիստ, յեթե փնտռում ես սառցազաշտեր՝

ալպյան կոշիկներով ու ձյունափայտներով նրանց վրայով քայլելու համար, մի գնա Արագած, այնտեղ այդպիսի սառցադաշտեր չկան:

Տուրիստ, յեթե փնտռում ես ձյունապատ զազաթներ կամ սառցնոդ քամիներ, մի գնա Արագած, այնտեղ այդպիսի քամիներ ու զազաթներ չկան:

Բայց յեթե, տուրիստ, ցանկանում ես վայելել բնության բարիքները՝ զուգորդված դեպի վեր սլացող բարձրունքների հետ, ապա գնա Արագած:

Տուրիստ, յեթե ցանկանում ես հաղորդակից լինել սոցիալիստական հնգամյա պլանները կազմելուն և խնդիրների լուծմանը, ապա գնա Արագած:

Յեթե դու Արագածն ես բարձրանում Արարատյան դաշտից, կամ մյուս կողմերից բարձրանալով արդեն հասել ես բարձունքներին, տես, թե ինչպես առջևդ մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա ցցվում է միայն սրածայր Մասիսը, վորը բաղկացած է լերկ ժայռերից, չինկիլներից և կամ ավազաքարերից,—ամբողջությամբ Արագածի հակապատկերը: Այդ է պատճառը, վոր ժողովրդական ավանդություններում, լեգենդներում Մասիսը միշտ ներկայացված է չար վոզիների բնակավայր, անիծված լեռ, իսկ Արագածի գովքը չի պակասում: Մինչդեռ Մասիսի փեշերին կարելի յե գտնել միայն հատ ու կենտ գյուղեր, ընդհակառակը, Արագածի շրջապատում կան բազմաթիվ գյուղեր, յերկու հարյուր հազար բնակչով:

Արագածի տուրիստական հմայքներից մեկն էլ այն է, վոր նա միայնակ բարձրանում է սարա-

հարթում, լայնանիստ ե և չի կապակցված վորևե ուրիշլեռան, վորով չորս կողմից կարելի յե բարձրանալ, չորս կողմը դիտել և հեռավոր տարածություններ ընդգրկել:

Արագածը տուրիստի համար՝ մնում ե և դեռ կմնա մի առեղծված. նրա հետ կապվում են յերկրաբանական, հանքաբանական, ջրային, բուսաբանական, կենդանաբանական և այլ բաղմաթիվ խնդիրներ:

Արագածի լանջերին գտնվում են նյութական կուլտուրայի պատմության բաղմաթիվ մնացորդներ, այդ լանջերում ՀՍԽՀ-ն Քսենոֆոնյան տան ու քոչվորական կենցաղի կողքին կառուցում ե սոցիալիզմն ու նոր կենցաղը:

Պետք ե գնալ ու տեսնել, փնտռել ու գտնել այդ ամենը և գյուտարարի հրճվանքով վայելել լեռնային բնության ամբողջ հաճույքը:

Ահա այդ բոլորը նկատի ունենալով, դեպի Արագած մարշրուտներին նպատակադրումն ել ձևակերպել ենք այդ հողի վրա և բաժանել յերեք խմբավորումների:

Յերեք տիպի մարշրուտներն ընդգծելիս, աշխատել ենք ըստ հնարավորության ճանապարհները չկրկնել, խակ վերջին տիպի համար բավականացել ենք մի մարշրուտով:

Ա. ՎԵՐԵԼՔԻ ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

Վերելքի մարշրուտներին գլխավոր նպատակն ե ծանոթանալ Արագածի ընդհանուր կազմությանը, շրջապատող սարահարթներին և ավելի

հեռու ընկած լեռների ու լեռնաշղթաների կազմությանը, կատարել գազառազդիտական ուսումնասիրություններ, վայելել այն հաճույքները, վոր կարելի յե գտնել կանաչով ու ծաղիկներով ծածկված մի բարձր սարի վրա: Բացի այդ, վերելքի մարշրուտները սովորեցնում են դժվարությունների դեմ մաքառել ու հաղթահարել:

Վերելքի մարշրուտները կազմված են 2—4 որվա համար. այս մարշրուտների հետ դժվար ե կազմակերպել արագածի յերկրաբանական, բուսական, ջրային և այլ նպատակներ ունեցող գիտահետազոտական արշավները, վորոնք հոգնեցուցիչ են և պահանջում են ավելի յերկար ժամանակ:

Արագածը դյուրամատչելի լեռ ե, կարելի յե բարձրանալ շրջակայքի բոլոր բնակավայրերից անխտիր, ուստի և կարելի յե գծել հարյուրավոր մարշրուտներ: Մենք բավականացել ենք գծելով վեց գլխավոր մարշրուտ, վորովհետև շրջակայքի բնակավայրերից վեր բարձրացողները բոլորն ել ճանապարհին միանալու յեն այս վեց ճանապարհներից վորևե մեկին:

Բ. ԳԻՏԱԼԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐՇԱՎ - ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

Այս տիպի մարշրուտների մեջ չկա գազաթ բարձրանալու պայմանը: Մարշրուտ-արշավները կատարվում են Արագածի լանջերին և նպատակ ունեն նպաստելու վորևե պրորլեմի լուծմանը:

Գ. ՇՐՋԱԿԱՅՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս ախպի մարշրուտները նպատակ ունեն
ուսումնասիրելու Արագածի շրջակայքում, նրա
լանջերի վրա տեղավորված բնակավայրերի բը-
նակչութունը, այդ բնակչությա՞ն դբադմուհըր,
կենցաղը, կուլտուրան, ինչպես և հանքային, բու-
սական հարստությունները, խորհրդային շինա-
րարությունը և այլն:

ՄԱՐՇՐՈՒՑ № 1

Վերելքի դեպի Արագածի խառնարանը յեվ
3-րդ Հառիխը

Տևողություն 2 րրից վոչ պակաս:

Մարշրուտը կարելի յե կազմակերպել միայն
ամռանը: Ձմեռային մարշրուտը կապված ե մեծ
գժվարությունների հետ: Ամենալավ ժամանակը
ոգոստոս ամսին ե, յերբ ձույնն արդեն հալել ե
ու վեր բարձրացող արահետները չորացել, յերբ
որերը յերկար են և ավելի պայծառ: Այս մարշ-
րուտով կարող են բարձրանալ բոլորը, նույնիակ
բարձրակրունկ կոշիկներ հագած կանայք:

Մարշրուտն սկսվում ե Աբարանի Ղարաքի-
լիսա գյուղից, ուր կարելի յե գնալ ավտոյով
(Յերևանից 45 կիլոմետր) և Համամլուից (75
կիլոմետր):

Ղարաքիլիսայից պետք ե գնալ 5 կիլոմետր
հեռու գտնվող Ղազնաֆար գյուղը: Ղազնաֆա-
րից վոտով, սայլով կամ ձիով բարձրանալ Գեր-

նովիտ կիրճով մինչև Լուկաշին ամառանոցը, ուր
և գիշերել:

Ճանկացողները կարող են ավելի վեր բարձ-
րանալ և գիշերել Ճգնավորի քարի տակ: Բայց
պետք է ցուրտ գիշերներին դիմանալու պատ-
րաստություն ունենալ:

Հաջորդ առավոտյան միջնադին սկսել բարձ-
րանալ 3-րդ Հառիճը (Արագածի չորս գագաթնե-
րից մեկն է), այդտեղից իջնել խառնարանը, վորը
գտնվում է մոտ 300 մետր ցած փոսում:

Այդտեղից Գերնովիտի կիրճով իջնել մինչև
Լուկաշին ամառանոցը և ապա ճանապարհը շե-
ղելով՝ Թաքապու լճի վրայով և սարվորների
վրանների միջով իջնել Թաքապու գյուղը, այն-
տեղից էլ Ղարաքիլիսա: Ամբողջ ճանապարհը,
սկսած Ղարաքիլիսայից, կարելի չէ հաշվել մոտ
60 կիլոմետր:

Այս մարշրուտի ժամանակ, բացի ընդհանուր
տեսարաններից, պետք է ուշագրություն դարձնել
հետևյալների վրա.

1. 3-րդ Հառիճի գլխի հարթ տարածությունը
(վորը կոչվում է Լուսավորչի կալատեղ) և նրա
յերկրաբանական կազմությունը:

2. Սառնարանը: Արագածը հանգած հրաբուխ
է, այդ պատճառով խառնարանից ծուխ չի բար-
ձրանում և ավելի խոր խոռոչներ չունի: Սառ-
նարանը գրեթե ծածկված է մշանջենական ձյունով:

3. Հին ժամանակներում գործող հրաբխի դո-
րությունը, վոր խառնարանից քարեր վեր է նե-
տել 3—400 մետր բարձրությամբ և խառնարանի
չուրջը դոյացրել է 4 գագաթ:

4. Լեոնային վտակ Գերնովիտը, վոր Արագածի բոշվոր թուրքերը անվանել են Դալի չայ (գիժ գեա) և այն կիրճը, վորի միջով հոսում ե այդ վտակը: Վտակը սկիզբն ե սունում ուղղակի խառնարանից:

5. Սառնարանի վերջին արտավիժումներն ու հանքային աղբյուրները: Սառնարանից դուրս գալու միակ ճեղքը՝ Գերնովիտի կիրճն ե, վորի հենց սկզբին, խառնարանից մի քանի տասնյակ մետր հեռու, կան մաքուր ծծումբի փոքրիկ տարածություններ, ինչպես նաև մի քանի հանքաջրեր իրար կողք-կողքի շարված՝ մի քանի մետր տարածության վրա:

6. Հայաստանի ամենամեծ ջրվեժներից մեկը Արագածի մեծ ջրվեժն ե՝ Գերնովիտի կիրճում: Մյստեղ, խառնարանից մի յերկու կիլոմետր ներքև իրար են հաջորդում 3 ջրվեժ, վորոնցից միջինն ունի 150 մետր սահանքային վայրեջք և 40—50 մետր բարձրությունից ուղղակի վայր ե թափվում:

7. Մյս մարշրուտի վրա կարելի յե գտնել նյութական կուլտուրայի բավական շատ մնացորդներ: Իրանցից հիշենք «Մխով» աղբյուրը՝ Արագածի ջրվեժից մի յերկու կիլոմետր ներքև և այլն:

8. Թաքառլու լիճը, վորն իր մեծությամբ Արագածի յերրորդ մեծ լիճն ե, գտնվում ե Լուկաշինի ամառանոցից մեկ կիլոմետր հեռու:

9. Խորհրդային կազմակերպված անասնապահությունն ու կոլտնտեսությունները և հին մեհառնտեսությունը — սար բարձրացողների տրնտեսությունը — ու դրանց հակադրությունը:

10. Աորհրգային գյուղն ու նրա կյանքը ճանապարհի վրա յեղած 4 գյուղերում (Ղարաքիլիսա, Ափնազեղ, ՂազնաՓար, Թաքաուլու):

11. Նախկին սառցադաշտերի ավերածություններն ու հետքերը, լատինական «Ո» տառի ձևով բլուրների կազմությունը և սառցային յերկիրը:

12. Հանքային տեսակներն ու բուսական տեսակները Գերնովիտի կիրճում (ներքևից մինչև խառնարան) և Գերնովիտի կիրճին կից Արագածի լանջերում:

ՄԱՐՇՐՈՒՏ № 2

Վերելք Արագածի մեծ գագաթը (Հյուսիսային Հառեցր 4096 մետր)

Տևողությունը 2 օր:

Առաջինի պես այս մարշրուտն ել պետք է կատարել ամառը՝ ոգոստոս ամսին:

Այս մարշրուտն սկսում է Բաշաբարան գյուղից, ուր կարելի չե գնալ Համամլու կայարանից (60 կիլոմետր) և Յերևանից (60 կիլոմետր) ավտոյով, իսկ Լենինականի գծով — Արթիկ կայարանից (30 կիլոմետր) ձիով, սայլով կամ ավտոյով:

Բաշաբարանից Արագածի լանջերով ուղղակի բարձրանալով հյուսիսային գագաթը, կարելի չե վայրեջք կատարել Քյոռբուլաղի հեղեղատի կողքով և իջնել Քյոռբուլաղում, կամ, քիչ հեռու՝ Հաջի Սալի գյուղում, վորտեղից վեց կիլոմետր յետ գնալով՝ Ղոնդաղսազ գյուղից կարելի չե վերադառնալ ավտոյով:

Ամբողջ մարշրուտը Բաշաբարան գյուղից մինչև խճուղու վրայի Ղանդաղսագ գյուղը մոտ 50 կիլոմետր եւ Գիշերելու տեղ կարելի չե գրանել միմիայն սար բարձրացողներին վրանում: Այս մարշրուտի հետաքրքիր մոմենտներն են.

1. Հայաստանի ամենադարձր գագաթը—Արագածի հյուսիսային գագաթը (4.096 մետր), վորտեղից կարելի չե տեսնել Հայաստանի ամբողջ լեռնակազմությունը, ինչպես նաև Մեծ Կովկասյան և Փոքր Կովկասյան լեռնաշղթաների ուրվագծումը:

2. Ավելի մոտիկ՝ Փամբակի լեռնաշղթան իր Մայմեխ գագաթով:

3. Քասախ գետի ջրավազանը:

4. Բազմաթիվ մանր լճակների գոյացումը Արագածի լանջերին և լեռնային հեղեղամաների սկզբնավորումը: Լեսսինգ լիճը գագաթի ներքևում:

5. Արագածի ամենաբարձր գագաթից բացվող տեսարանը՝ մոտ 400 մետր խորության վրա գտնվող Արագածի գլխավոր խառնարանի վրա (խառնարան գնալն ավելի հեշտ ե Ն 1 մարշրուտով):

6. Սար բարձրացողներին ու մարշրուտի գծի վրա ընկած գլուղների կենցաղը, կույտնտեսական և խորհրդային շինարարությունը:

7. Արագածի լանջերի քարային տեսակները, բուսական հարստությունը և այլն:

8. Նյութական կուլտուրայի մնացորդները, որինսակ՝ Ղանդաղսագի յեզիդական գերեզմանահողը և այլն:

Վերեւի դեպի Սեվ լինը յեվ Արագածի գագաթը
(արեվմսյան յեվ հարավ-արեվմսյան հանեջները)

Տևողություն 2—3 օր:

Այս մարշրուտն ևս ցանկալի յե կատարել ոգոստոս ամսին: Մարշրուտն սկսվում ե Բյուրական գյուղից, ուր կարելի յե գնալ Յերևանից մինչև Աշտարակ ավտոյով, իսկ Աշտարակից մինչև Բյուրական (10 կիլոմետր)՝ սայլով կամ ձիով:

Մարշրուտն այդտեղից նախ Անբերդի ձորով և ապա Արխաշենի ձորակով բարձրանում ե մինչև Սև լիճը (Ղարագյուլ), ուր և կարելի յե գիշերել ողբերկույթաբանական կայանում: Այդտեղից չինկիլ քարերի վրայով կարելի յե բարձրանալ նաև արևմտա-հարավային (3.916 մետր), ապա արևմտյան (4.018 մետր) գագաթները:

Վայրեջքը — Արխաշեն բլուրի հյուսիսային կողմից, Մանթաշի ձորի գլխով և Սև լճի հյուսիսային լանջերով, Բագու լճի վրայով իջնել Արթիկ, վորտեղ վերջանում ե մարշրուտը:

Մարշրուտի յերկարությունը կազմում ե մոտ 100 կիլոմետր:

Մարշրուտի ընթացքում կարելի յե տեսնել և ուսումնասիրել հետևյալը.

1. Արարատյան և Շիրակի գաշաերն ու նրանց յեզերող լեռնաշղթաները:

2. ՀՍԽՀ ամենաբարձր լիճը՝ Սև լիճը և նրա կողքին ամենաբարձր հիդրոմետրիկ կայանը: Արխաշեն արհեստական ջրանցքը՝ այդ լճի ջուրն ոգտագործելու համար:

3. Արագածի յերկրորդ ամենամեծ լիճը՝ Բագու լիճը:

4. Արագածի զույգ գագաթները, ափսոսելից ներքև խառնարանի տեսքը:

5. Արագածի կիրճերն ու ձորերը. հյուսիսային, արևմտյան և արևելյան կողերին և լանջերի վրա գտնվող գագաթները՝ Արխաշեն, Ղարադաղ, Սեվ լեռ, Ամբերդ, Գյուլ-Ջիարեթ, Վոսկեթաս, Ճըզնավոր և այլն: Դրանց հանգած հրաբխի հետքերը:

6. Ղարանդու գետի, Ամբերդ վտակի և մի շարք լեռնային վտակների կազմությունը (Արխաշեն, Գյուլքենդ և այլն):

7. Նյութական կուլտուրայի հսկա կոթողներ՝ Ամբերդ ամրոցը և այլն:

8. Խորհրդային անասնապահական մեծ տնտեսությունները, կոլտնտեսական անասնապահությունը և քոչվորները ու այդ բոլորի համեմատությունը:

9. Խորհրդային գյուղն ու նրա կյանքը ճանապարհի վրա գտնվող գյուղերում (Բյուրական, Արթիկ և այլն):

10. Արագածի հանքային հարստությունները (տուֆ, պեմզա և այլն):

11. Արթիկ տուֆը, ինդուստրիալ Բանավանը հին գյուղի կողքին ու այդ յերկուսի հակադրությունը:

12. Արթիկ—Սև լիճ — Բյուրական լեռնային ճանապարհը, նրա ռազմական, տնտեսական ու տուրիստական նշանակությունը:

13. Հայ և յեզդի սարվորների կենցաղն ու նրանց կուլտուրան:

14. Բարձր լեռնային բուսականութիւնը, խաղողի, պտղատու ծառերի և տեխնիկական բույսերի զոնային սահմանները:

15. Հին սառցադաշտերի հետքերը (վոչխարի ճակատները — *бараны лбу*) ու նրանց ընդգրկած սահմանները:

ՄԱՐՇՐՈՒՏ № 4

Վերելիք Սեվ լին, առանց գազաթը բարձրանալու

Տևողութիւնը ամառ 1 որ, ձմեռը 2 որ:

Այս մարշրուտն № 3 մարշրուտի կրկնողութիւնն է, միայն թե Սև լճից վեր դեպի գազաթները չի բարձրանում:

Այս մարշրուտն ամբողջութեամբ կարելի չէ կատարել ձիով, Բյուրականից բարձրանալով մինչև Սև լիճ և այնտեղից իջնելով Արթիկ:

Մյուս մաշրուտներին հակառակ, այս մարշրուտը կարելի չէ կատարել տարվա բոլոր յեղանակներին, ձմեռը նաև դահուկներով: Իհարկե ձմեռային մարշրուտն ունի իր յուրահատուկ դժվարութիւնները (ձյուն և ցուրտ): Գարնանային (ապրիլ—հուլիս) մարշրուտների հատուկ դժվարութիւնն է ձյունահալը և ցեխը:

Այս մարշրուտի ժամանակ ևս կարելի չէ տեսնել այն բոլորը, ինչ վոր կարելի չէ տեսնել № 3 մարշրուտի ժամանակ, բացառութեամբ գազաթը բարձրանալու հաճույքից և Արխաշենի գազաթը (Սև լճի վերևում) ու Արագածի հյուսիսային լանջերի կազմութիւնը տեսնելուց:

ՄԱՐԾՐՈՒՏ № 5

Վերելի Թալինի Երջանից

Տևողությունը 3 — 5 որ:

Այս վերելքն՝ ունի ավելի շուտ տեղական նշանակություն, կարելի չէ բարձրանալ Թալինի վորևէ գյուղից՝ չինկիլներին և «Գոգո» կոչված տեղերի վրայով, ապա ճանապարհին միանալ Արթիկից — Սեվ լիճ մարշրուտային գծին, հետո իջնել Բյուրական կամ Արթիկ:

Այս մարշրուտային գծի ժամանակ նույնպես կարելի չէ տեսնել գրեթե այն բոլորը, ինչ վոր կարելի չէ տեսնել մարշրուտ № 3-ում:

Մարշրուտը հանձնարարվում է կատարել ոգոստոսին:

ՄԱՐԾՐՈՒՏ № 6

Վերելի դեպի չորս գագաթները յեվ շուրջանակի պսույս հին սառցադաշտերի հետեերով:

Տևողությունը 3 — 4 որ:

Այս մարշրուտը կարելի չէ կատարել միայն ամառը՝ ոգոստոս — սեպտեմբեր ամիսներին:

Մարշրուտը հանդիսանում է № 1, 2 և 3 մարշրուտների կոմբինացիա:

№ 2 մարշրուտով բարձրանալ Բյուրականից կամ Արթիկից և գիշերել Սև լճի ափին:

Այդտեղից բարձրանալով հարավ-արևմտյան և արևմտյան գագաթները, նույն գագաթների յեգերային լանջերով գնալ Կյուսիսային ամենա-

բարձր գագաթը և գիշերել այդ գագաթից ներքեվ № 2 մարշրուտում նշված քարակույտերի մոտ:

Այդտեղից հին սառցադաշտերի հետքերով մեկնել գեպի արևելք, գտնել Գերնավիտի աջ վտակի սկիզբ հանդիսացող Լեսսինգ լճակը և այնտեղից բարձրանալ արևելյան գագաթն ու իջնել խառնարան: № 1 մարշրուտի գծով շարունակել ճանապարհը, գիշերել Լուկաշին ամառանոցում և Ղազնաֆար գյուղի վրայով իջնել Աբարանի խճուղին, և մարշրուտը համարել վերջացած:

Այս մարշրուտն ունի մոտ 150 կիլոմետր ճանապարհ, կապված է մի շարք վերելքների ու վայրեջքների հետ, բավական հոգնեցուցիչ է, բայց Արագածի նստվածքի ուսումնասիրության ամբողջական ու լրիվ մարշրուտն է, վորի ժամանակ կարեկի յե դիտել և ուսումնասիրել № 1, 2 և 3 մարշրուտների համար նշված բոլոր պարագաները, բացառությամբ այդ մարշրուտների ներքևի մասերում յեղած նյութական կուլտուրայի մնացորդների ու խորհանտեսությունների:

ՄԱՐՇՐՈՒՏ № 7

Գիսա-հեսագոստկան աշխատանքներ Արագածում

Այս մարշրուտի ուղղությունն ու տեղումն թյունը կարող է փոխվել նայած նպատակադրմանը: Որինակ, նյութական կուլտուրայի մնացորդների ուսումնասիրությունն Արագածի վրա

կարելի յե կատարել և մեկ որում և յերեսուն որում ու ելի չավարտել: Կարելի յե բավակա- նանալ Ամբերդ ամրոցն այցելելով, Քայց և կա- բելի յե ընդգրկել Արագածի բոլոր լանջերը:

Հանքային հարստությունների ուսումնասի- րության ասպարիզում կարելի յե փնտռել և տեսնել պեմզա վոչ միայն Մահմուդջուղում, այլև Թալինում (Բերկլու), Աբարանում և այլն: Նույնը նաև Ոբսիդյանի, Արթիկ տուֆի և այլ հանքերի նկատմամբ:

Ալալյան արոտներ, դեղաբույսեր կարելի յե ուսումնասիրել ամեն գծով:

Սաղողի, տեխնիկական բույսերի ու պտղա- տու ծառերի աճման, զոնային բարձրությունները կարելի յե ուսումնասիրել թե՛ Թաքիա-Փարբի, թե՛ Դրղր-Բյուրականի և թե՛ Կոչ գյուղերի ուղ- ղություններով:

Հացահատիկների, զանազան ծաղիկների ու խոտաբույսերի աճման զոնային բարձրություն- ները կարելի յե ուսումնասիրել Արագածի չորս կողմից:

Սառցազաշտերի հետքերը, «Ա» տառի ձևով բլուրները, վոչխարի ճակատները, կարելի յե զբա- նել և՛ Աբարանի կողմից, և՛ Սև լճի մոտքերում, և Մանթաշի ձորի կողքերին:

Հանգած-հրաբուխներն ու նրանց խառնարան- ները դիտելու և ուսումնասիրելու համար կարելի յե բավականանալ Թալինի շրջանում գտնվող Բերկլու գագաթով, կամ բարձրանալ գլխավոր խառնարանը և դիտել բոլոր խառնարանները՝ Վոս- Կեթաս, Բոզութլի և այլն:

Քոչվորական և սարվորների կենցաղը նույն, պես կարելի յե ուսումնասիրել ամեն ուղղութեամբ ներքևից սկսած մինչև Սև լճի ամերը:

Գիտանետագոտական նպատակները բազմաթիվ են և ամեն մի նպատակադրման ժամանակ պետք է կազմել համապատասխան մարշրուտ, վորոշ չափով ոգտագործելով վերոհիշված 1 — 6 մարշրուտների առանձին մասերը:

ՄԱՐՇՐՈՒՏ № 8

Արագածի Երզնայաք

Տևողութունը 3 — 5 օր:

Մարշրուտն սկսվում է Աշտարակից, մինչև այնտեղ կարելի յե գնալ ավտոյով: Ավտոյով կարելի յե ճանապարհը շարունակել մինչև Ղոնդաղսազ գյուղը, այնտեղից ձիով գնալ մինչև Արթիկ բանավան, ապա շարունակել ճանապարհը՝ Աղիյաման, Մհալի, Աղջաղալա, Կոշ, Ուջան, Ագարակ գյուղերի վրայով և հասնել Աշտարակ:

Ամբողջ մարշրուտն իր զիկզակներով կազմում է մոտ 200 կիլոմետր ճանապարհ:

Այս ճանապարհի վրա յեն գտնվում Աշտարակ, Մուղնի, Կարբի, Ոհանավանք, Արտաշավան, Ավնազեղ, Ղարաքիլիսա, Ալիքուչակ, Բաշ-Աբարան, Ղոնդաղսազ, Սանգյառ, Քարվանսարա, Ներքին Գյոզալդարա, Նորաշեն, Մեծ Արբիավալի և Փոքր Արբիավալի, Բաշգյուղ, Ղիչաղ, Արթիկ, Մահմուդլուղ, Շիրվանջուղ, Սոգյուլթուղ, Ահագչի, Ղուլդարվիշ, Ղարադոյմազ, Ներքին Աղջաղալա, Կոշ,

Ուշան, Ազարակ, Թվով 29 բնակավայր: Ճանապարհը մի քիչ զիկզակով կատարելիս կարելի յե այցելել ավելի քան վաթսու՛ն բնակավայր:

Այս մարշրուտը տալիս ե հարուստ տպավորություններ Արագածի շրջապատում բնակվող բնակչության ժողովրդագրության, հին և նոր կենցաղի, քսենոֆոնյան տան կողքին նրան հակադիր խորհրդային շինարարության, Արագածի ջրային, բուսական, հանքային հարստությունների, նյութական կուլտուրայի բազմաթիվ հուշարձանների և այլնի մասին:

Տուրիստը հնարավորություն ունի բազմակողմանիորեն ուսումնասիրել իրեն հետաքրքրող վորեե հարցը և կամ ստանալ ընդհանուր տպավորություններ:

Այսպիսի շրջագայության ժամանակ կարելի յե հավաքել նաև ազգաբնակչության մեջ գեռևս կենդանի մնացած բոլոր լեզուներն ու ավանդությունները Արագածի մասին և ճշտել Արագածի ու շրջապատի տեղազրական անունները:

Բավականանում ենք այս ութ մարշրուտով: Տուրիստների խմբակներն Արագածին նվիրված այլ ուսումնասիրությունների հիման վրա կարող են կազմել նորանոր մարշրուտներ:


Պատասխանատու խմբագիր Դ. Սարոյան. Լեզվական խմբագիր Արշ. Աստամյան. Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Դավթյան. Սրբագրիչ Մ. Գեղարզյան. Հանձնված Ե արտադրության 28/VI 1934 թ. Ստորագրված Ե տպելու՝ 29/VIII 1934 թ. Ստատֆորմաթ Բ6-125x176 Հրատարակ. № 3001 Գրավիտ 341. Պատվեր № 3377 Տրամ 3000

Тип. им. Стачки 1932 г. АЧКПІ Р. став-Дон



ԱՐԱԳԱՅ

364 ՆՐԱ
ՀՈԳԱՄԱՏՈ



ԳԻՆԸ 40 ԿՈՊԵԿ

7669

Յ. ԿՈՐԿՈՏՅԱՆ

ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ ԱՐԱԳԱՑԻ



ԱՐՄԵՆԻԳԻՏ — ԵՐԻՎԱՆ